

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**Կ ո լ յ ա ն Գ ա յ ա ն ե Լ ե ն ո յ ի
Է Լ Ե Կ Տ Ր Ա Է Ն Ե Ր Գ Ե Տ Ի Կ Ա Կ Ա Ն Հ Ա Մ Ա Կ Ա Ր Գ Ի
Ռ Ե Ժ Ի Մ Ն Ե Ր Ի Ե Ր Կ Ա Ր Ա Ժ Ա Մ Կ Ե Տ Կ Ա Ն Խ Ա Տ Ե Ս Մ Ա Ն
Ռ Ի Ս Կ Ե Ր Ի Գ Ն Ա Հ Ա Տ Ո Ւ Մ**

(Ա տ ե ն ա խ ո ս ու Լ թ յ ու Լ ն)

**Ե .14.01 «Է ն ե Ր գ ե տ ի կ հ ա մ ա կ ա Ր գ ե Ր , հ ա մ ա լ ի Ր ն ե Ր և դ Ր ա ն ց
կ առ ա վ ա Ր ու Լ մ ը » մ ա ս ն ա գ ի տ ու Լ թ յ ա մ ք**

**տ ե խ ն ի կ ա կ ա ն գ ի տ ու Լ թ յ ու Լ ն ե Ր ի թ ե կ ն ա ծ ու ի
գ ի տ ա կ ա ն ա ս տ ի ճ ա ն ի հ ա մ ա Ր**

**Գ ի տ ա կ ա ն ղ ե կ ա վ ա Ր ` տ.գ.թ., դ ո ց ե ն տ
Գ ն ու Լ ն ի Տ ի գ Ր ա ն Ս ե Ր գ ե յ ի**

**Ե Ր և ա ն 2018
Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

ՆԵՐԱԾՈՒ ԹՅՈՒՆ	4
ԳԼՈՒԽ1. ԳՐԱԿԱՆՈՒ ԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ.....	10
1.1 Աշխարհի երկրներում Էներգաապահովվածության զարգացման միտումները	10
1.2 Էներգետիկ շուկաների զարգացումը: ՀՀ Էներգետիկ շուկան և դրա զարգացման հեռանկարները	18
1.3 ՀՀ Էներգահամակարգի զարգացման ծրագրեր	25
1.4 Տարածաշրջանային համագործակցության ընդլայնման դերը	33
ԳԼՈՒԽ2. ՀՀ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՊԱՅԱՆՋԱՐԿԻ ԿԱՆԽԱՏԵՍՄԱՆ ԶԳԱՅՈՒՆՈՒ ԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ	39
2.1 Ազդեցիկ գործոնների նկատմամբ Էլեկտրաէներգիայի երկարաժամկետ կանխատեսման զգայունության որոշման մեթոդիկան	39
2.2 Փորձարարական հետազոտության ներքին անավորումը և իրականացումը	49
2.5 Եզրակացություն	59
ԳԼՈՒԽ3. ՀՈՐՈՒ ԹՅԱՆ ՊԱՅԱՆՋԱՐԿԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ	61
3.1 Էլեկտրական բեռի կանխատեսման մեթոդների համեմատական վերլուծության և՛ ավանդական մեթոդներ և արհեստական ինտելեկտ.....	61
3.2 Կանխատեսման մոդելների համակարգը և մեթոդաբանությունը	65
3.3 Հզորության պահանջարկի կանխատեսման նպատակով ԱՆՖԻՍ մոդելի մշակում	71
3.4 Հզորության պահանջարկի կանխատեսման ԱՆՖԻՍ մոդելի մոլտեսային տվյալների մշակման ավգորիթմը և կանխատեսման արդյունքները	81
3.4.1 Արտաքին օդի ջերմաստիճանի մոդելավորում՝ կանխատեսումային ժամանակահատվածի համար	82
3.4.2 Ամպամածության մակարդակի գնահատում կանխատեսումային ժամանակահատվածի համար	88
3.4.3 Օրվաբնույթը և լուսավոր ժամերը կանխատեսումային ժամանակահատվածի համար	92
3.4.4 Միջին օրեկան Էներգիայի քանակի կանխատեսում	92
3.5 Հզորության պահանջարկի ծածկման խնդրի դրվածքը և արդյունքները	97
3.6 Եզրակացություն	109
ԳԼՈՒԽ4. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԱՐԵՐԻ ԾԱՌԱՅՈՒ ԹՅԱՆ ՄԱՑՈՐԴԱՅԻՆ ԺԱՄԿԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ	111
4.1 Էներգահամակարգի տարրերի հոսքային տեսության որոշակի դրույթները՝ փոխարինման վերաբերյալ որոշման կայացման տեսանկյունից	112

4.2 Էներգահամակարգի տարրերի ծառայ ու թյ ան մնացորդայ ին ժամկետի որոշ ու մը	115
4.3 Էներգահամակարգի տարրերի փոխարինման վերաբերյ ալ որոշ ման կայ աց ու մը ոչ հստակ բազմ ու թյ ու նների տես ու թյ ան կիրառմամբ	123
4.4 Սարքավորման ծառայ ու թյ ան մնացորդայ ին ժամկետի գնահատման ռիսկերի հաշվարկ Տազ ու տիի կորստի ֆոև կցիայ ի կիրառմամբ ռիսկերի գնահատման մեթոդով	139
4.5 Եզրակաց ու թյ ու ն	142
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	144
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	146
ՀԱՎԵԼ ՎԱԾՆԵՐ	153

Ն Ե Ր Ա Ճ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Աշխատանքի

արդիականությունը:

Էլեկտրաէներգետիկայի պահանջարկի և առաջարկի հաշվեկշռի և արտադրական հզորությունների համապատասխան ծավալի ապահովման գործընթացում անհրաժեշտ է հաշվի առնել շահագործման պարբերականությունը՝ ըստ անհրաժեշտության իրականացնելով համակարգի տարրերի նորոգում, փոխարինում և նոր հզորությունների ներդնում, ինչպես նաև միջոցառումներ ձեռնարկել նշված գործընթացի վրա Էլեկտրաէներգիայի երկարաժամկետ պահանջարկի ազդեցության անորոշությունը նվազեցնելու ուղղությամբ:

Հաշվի առնելով, որ Էլեկտրաէներգիայի պահանջարկի մեծությունը, ի թիվս այլոց, զգալի կախված է տնտեսական ցուցանիշներից, կլիմայական պայմաններից, որոնց փոփոխությունը ժամանակի ընթացքում ուղեկցվում է զգալի անորոշությամբ, կանխատեսումային և փաստացի մեծությունների ընթացքում կարող են զգալիորեն շեղվել ժամանակի ընթացքում և մեծացնել ելքային մեծության կանխատեսման սխալը:

Ժամանակի յուրաքանչյուր պահին համապատասխան հզորությունով ապահովվածություն գնահատումը նույնպես համալիր մոտեցման կարիք ունի: Մասնավորապես, համակարգի տարրերի տեխնիկական վիճակի գնահատման, փոխարինման վերաբերյալ որոշում կայացնելու վրա ազդող գործոնների գնահատման տեսանկյունից:

Ներկայումս առավել քան նախկինում գիտակցված է որոշումների կայացման գործընթացում ռիսկերի գնահատման անհրաժեշտությունը, որն առավել արդիական է դարձնում ատենախոսության մեջ

ն երկայնացված հետազոտություններին
արդիականությունը: Ռիսկերի գնահատման
գործընթացում անհրաժեշտ է հաշվի առնել
ապագայում անորոշություններին առկայությունը
որպես ռիսկի հիմնական նախապայման:
Անորոշությունը հնարավոր է բացահայտել
ռիսկերը գնահատելով, բայց դրա ազդեցությունն
ամբողջովին չեզոքացնելն գործնականում անհնար
է:

Աշխատանքի նպատակը: Սույն ատենախոսության
հիմնական նպատակն է զարգացնել առկամեթոդները և
մշակել մաթեմատիկական մոդելներ, որոնք
հնարավոր կդարձնեն էլեկտրաէներգետիկ
համակարգի ռեժիմների երկարաժամկետ
կանխատեսման ընթացքում մեղմացնել
անորոշության գործոնը, ինչպես և հնարավորինս
ճշգրիտ որոշում կայացնել համակարգում գործող
տարրերի փոխարինման վերաբերյալ:

Նշված նպատակին հասնելու համար
ատենախոսության մեջ առաջադրվել և լուծվել են
հետևյալ խնդիրները.

- ազդեցիկ գործոններին նկատմամբ
էլեկտրաէներգիայի երկարաժամկետ
պահանջարկի կանխատեսման զգայունության
որոշում՝ փորձարարական պլանավորման
մեթոդիկ իրառամբ,
- հզորության պահանջարկի կանխատեսման
ադապտիվ նեյրոն չհստակ ելքով մոդելի
մշակում,
- հզորության պահանջարկի կանխատեսման
վերոնշյալ մոդելի մոլտքային տվյալների
կանխատեսման ալգորիթմի մշակում,
- կանխատեսվող հզորության պահանջարկի
լավարկային ծածկում,

- Է ն եր գ ա հ ա մ ա կ ա ր գ ի տ ա ր ր ե ր ի ծ առ ա յ ու թ յ ա ն մ ն ա գ ո ր դ ա յ ի ն ժ ա մ կ ե տ ի գ ն ա հ ա տ ու մ ը ս տ ս ց ե ն ա ր ն ե ր ի ,
- Է ն եր գ ա հ ա մ ա կ ա ր գ ի տ ա ր ր ե ր ի փ ո խ ա ր ի ն մ ա ն վ եր ա ք ե ր յ ալ ո ր ո շ մ ա ն կ ա յ ա գ ու մ ո չ հ ս տ ա կ ք ա գ մ ու թ յ ու ն ն ե ր ի կ ի ր առ մ ա մ ք ,
- ս ա ր ք ա վ ո ր մ ա ն ծ առ ա յ ու թ յ ա ն մ ն ա գ ո ր դ ա յ ի ն ժ ա մ կ ե տ ի ո ր ո շ մ ա ն ռ ի ս կ ե ր ի գ ն ա հ ա տ ու մ՝ Տ ա գ ու տ ի ի կ ո ր ս տ ի \$ ու ն կ ց ի ա յ ի կ ի ր առ մ ա մ ք :

Գ ի տ ա կ ա ն ն ո ր ու յ թ ը .

1. Է լ ե կ տ ր ա Է ն եր գ ի ա յ ի պ ա հ ա ն ջ ա ր կ ի կ ա ն խ ա տ ե ս մ ա ն գ գ ա յ ու ն ու թ յ ա ն վ եր լ ու ծ ու թ յ ու ն ,
2. առ ա ն ց ն ո ր ԱԷԿ-ի Է լ ե կ տ ր ա Է ն եր գ ե տ ի կ ա կ ա ն հ ա մ ա կ ա ր գ ի ռ ե ժ ի մ ն ե ր ի կ ա ն խ ա տ ե ս ու մ մ ի ն չ ն 2036թ թ .,
3. հ գ ո ր ու թ յ ա ն պ ա հ ա ն ջ ա ր կ ի վ ր ա ա գ դ ո ղ մ ի շ ա ր ք գ ո ր ծ ո ն ն ե ր ի կ ա ն խ ա տ ե ս մ ա ն մ ե թ ո դ ի կ ա , ո ր ը հ ն ա ր ա վ ո ր ու թ յ ու ն Է տ ա լ ի ս մ ե ղ մ ա ց ն ե լ դ ր ա ն ց ե ր կ ա ր ա ժ ա մ կ ե տ կ ա ն խ ա տ ե ս մ ա ն ա ն ո ր ո շ ու թ յ ու ն ը ,
4. ԱՆՖԻՍ հ ա մ ա կ ա ր գ ի կ ի ր առ մ ա ն մ ի ջ ո ց ո վ հ գ ո ր ու թ յ ա ն պ ա հ ա ն ջ ա ր կ ի կ ա ն խ ա տ ե ս մ ա ն հ ա մ ա ր ց ա ն ց ի ս տ ե ղ ծ ու մ՝ հ գ ո ր ու թ յ ա ն պ ա հ ա ն ջ ա ր կ ի կ ա ն խ ա տ ե ս մ ա ն ճ շ տ ու թ յ ա ն մ ե ծ ա ց մ ա ն ն պ ա տ ա կ ո վ ,
5. Է ն եր գ ա հ ա մ ա կ ա ր գ ի տ ա ր ր ե ր ի փ ո խ ա ր ի ն մ ա ն մ ո դ ե լ , ո ր ն հ ն ա ր ա վ ո ր ու թ յ ու ն Է տ ա լ ի ս ն վ ա գ ե ց ն ե լ փ ո խ ա ր ի ն մ ա ն վ եր ա ք ե ր յ ալ ո ր ո շ մ ա ն կ ա յ ա ց մ ա ն ռ ի ս կ ը :

Պ ա շ տ պ ա ն ու թ յ ա ն ն եր կ ա յ ա ց վ ո ղ դ ր ու յ թ ն ե ր ը .

1. Է լ ե կ տ ր ա Է ն եր գ ի ա յ ի պ ա հ ա ն ջ ա ր կ ի ե ր կ ա ր ա ժ ա մ կ ե տ կ ա ն խ ա տ ե ս մ ա ն գ գ ա յ ու ն ու թ յ ա ն ո ր ո շ մ ա ն մ ե թ ո դ ի կ ա ն ,

2. հզոր ու թյան պահանջարկի երկարաժամկետ կանխատեսման մեթոդիկան՝ հաշվի առնելով մոլտքայի նգործոններին ու ուրոշ ու թյանը ,
3. Էներգահամակարգի տարրերի փոխարինման վերաբերյալ ուրոշման կայացման ռիսկերի գնահատման մեթոդիկան ,
4. ոչ սիմետրիկ գաուսյան ֆունկցիաներով ներկայացված ոչ հստակ եզրակացություններին հետևապես ռիսկերի գնահատման բանաձևը :

Գործնական նշանակությունը :

Ատենախոսությունն մեջ ներկայացված հետազոտությունն արդյունքների գործնական նշանակությունը կայանում է հետևյալում . Էլեկտրաէներգիայի պահանջարկի երկարաժամկետ կանխատեսման զգայունությունն ուրոշման մեթոդը հնարավորություն է ընձեռում Էլեկտրաէներգիայի պահանջարկի վրա ազդող գործոններին ուրոշակի շեղման դեպքում գնահատել Էլեկտրաէներգիայի պահանջարկի շեղման աստիճանը : Հաշվի առնելով կլիմայական գործոններին ազդեցությունը հզոր ու թյան պահանջարկի մեծությունը վրա, դրանց մեծություններին երկարաժամկետ կանխատեսման նպատակով ատենախոսությունն մեջ առաջարկվող մոտեցումները , ինչպես նաև հզոր ու թյան պահանջարկի կանխատեսման մեթոդիկան հնարավորություն է տալիս ժամանակային և տեխնիկական ռեսուրսների նվազագույն առկայություն պարագայում իրականացնել նշված մեծություններին կանխատեսում բավարար ճշտությամբ : Էլեկտրաէներգետիկական համակարգի ռեժիմների երկարաժամկետ կանխատեսումը հնարավորություն է տալիս

գնահատել համակարգի հեռանկարային զարգացումը և դրա ընթացքում անհրաժեշտ լուծումների անհրաժեշտությունը: Եներգահամակարգի տարրերի փոխարինման վերաբերյալ որոշման կայացման ռիսկերի գնահատման ներկայացված մեթոդը հնարավորություն է ընձեռում նվազագույն մոտքային տվյալների պարագայում գնահատել տարրերի մնացորդային ժամկետի հաշվարկման ռիսկերը և նվազեցնել անորոշության գործոնը որոշման կայացման գործընթացում:

Ատենախոսություն տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը:

Ատենախոսություն համար տեսական հիմքեր են ծառայել փորձերի պլանավորման, արհեստական ինտելեկտի, հոլսալիություն, սարքավորումների փոխարինման և ոչ հստակ բազմությունների տեսությունները: Որպես տեղեկատվական հիմք են հանդիսացել հրապարակված տեղեկատվությունը, տեղեկագրերը, պարբերականները, ռազմավարական փաստաթղթերը և այլն:

Աշխատանքի արդյունքների կիրառումը և հրապարակումները:

Աշխատանքի արդյունքները ներդրվել են «Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ում՝ սարքավորումների փոխարինման վերաբերյալ որոշման կայացման գործընթացում, որի վերաբերյալ ներդրման ակտը ներկայացված է Հավելված №1-ում:

Կատարված հետազոտությունները հիմնական դրույթներն ու արդյունքները արտացոլված են ութ գիտական աշխատություններում:

Ատենախոսություն կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսությունը ներկայացված 127 էջի վրա, պարունակում է 25 նկար, 36 աղյուսակ, 104 անուն ընդգրկող օգտագործված գրականության ցանկ և 4 հավելված: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից և եզրակացություններից:


Գ Լ ՈՒ Խ 1. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

1.1 Աշխարհի երկրներում

Էներգաապահովվածությունը և զարգացման միտումները


20-րդ դարը բնութագրվում էր առաջնային Էներգիայի պաշարների սպառման արագ աճով՝ 1900 թվականի համեմատ համաշխարհային Էներգիայի սպառումը դարի վերջում աճել է շուրջ 15 անգամ, իսկ մեկ շնչին ընկնող սպառումը՝ 4,4 անգամ: Էներգիայի սպառման ծավալների մեծացման հիմնական պատճառ են հանդիսանում բնակչության աճը և տնտեսության զարգացումը: Նույն ժամանակահատվածի համար երկրի բնակչությունն աճել է ավելի քան 4 անգամ, իսկ իրական եկամուտը՝ 25 անգամ [1]:

Էներգիայի համաշխարհային սպառման վիճակագրական տվյալների [2] ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2000-2015 թվականներին աշխարհում Էներգիայի սպառման ծավալներն աճել են 1,6 անգամ, իսկ մեկ շնչին ընկնող առաջնային Էներգիայի սպառումը՝ 1,3 անգամ:



Նկար 1.1 Աշխարհում Էներգիայի սպառումն ըստ երկրամասերի

Միևնույն ժամանակ, սպառման աճի տեմպերը դանդաղելու միտում են ցուցաբերում: Վերջինիս փոփոխությունները պատկերված են նկար 1.2-ում:




Նկար 1.2 Աշխարհում առաջնային էներգիայի սպառման աճի տեմպերն ըստ տարիների

Համաձայն մինչև 2030 թվականը համաշխարհային էներգետիկայի զարգացման կանխատեսման [3] մոտակա 15 տարվա ընթացքում հավանական է տնտեսության արագ աճ՝ բնակչության եկամուտների ցածր կամ միջին մակարդակով: Մինչև 2030 թվականը մեկ շնչին ընկնող էներգիայի սպառումը կաճի մոտավորապես 1970-90-ական թվականների տեմպերով՝ 0,7% տարեկան: Սակայն ՀՆԱ-ի էներգատարությունը կշարունակի աճել ամբողջ աշխարհում և ավելի արագ տեմպերով:

Համաձայն ԱՄՆ էներգիայի տեղեկատվական վարչության կանխատեսումների [4] էներգիայի պահանջարկի զգալի աճ տեղի կունենա զարգացող երկրներում, որտեղ էներգիայի պահանջարկի կանխատեսվող միջին տարեկան աճը կկազմի 3%: Արդյունաբերական երկրներում, որտեղ տնտեսությունը համեմատաբար կայուն է, իսկ բնակչության աճը հարաբերականորեն ցածր է, կանխատեսվում է էներգիայի պահանջարկի ավելի ցածր աճի տեմպեր՝ 0,9%:

Երկրի վառելիքաէներգետիկ համալիրի զարգացման պլանավորման արդյունավետության և էներգետիկ անվտանգության ապահովման

միջոցառումներն իրականացման համար կարևոր են
 են երգաապահովվածություն
 վերլուծությունը: Երկրների
 են երգաապահովվածություն կարևոր ցուցանիշ է
 հանդիսանում մեկ շնչին ընկնող առաջնային
 են երգիայի մեծությունը [2]:



Նկար 1.3 Երկրների են երգաապահովվածություն մակարդակը

Երկրներում են երգաապահովվածություն մակարդակը պայմանավորված է երկրում առկա են երգեցողի ռեսուրսների քանակով, ինչպես նաև այլ ընտրանքային են երգառեսուրսների օգտագործման մակարդակով: Մասնավորապես 2015 թվականին Նորվեգիան Էլեկտրաեն երգիայի արտադրության ընդհանուր ծավալի 96%-ի համար օգտագործել է հիդրոէներգետիկ ռեսուրսները: Նոր Զելանդիան Էլեկտրաեն երգիայի 79%-ը ստացել է այլ ընտրանքային են երգիայի աղբյուրների օգտագործումից, մասնավորապես հիդրոէներգիա, բիոկամելիք, քամի:

Են երգիայի պակասորդ ունեցող երկրները ստիպված են իրենց ՀՆԱ-ի գգալի մասը ծախսել են երգակիրներ ձեռք բերել ու վրա, ինչը բացասաբար է ազդում տնտեսության և սոցիալական վիճակի վրա:

Միևնույն ժամանակ այդ երկրները խոցելի են դառնում Էներգառեսուրսներ մատակարարող երկրների քաղաքական և տնտեսական ճնշումների նկատմամբ:

Հայաստանն առավել ապես ածխաջրածնային Էներգակիրներ ներմուծող երկիր է՝ բնական գազ և նավթամթերք: Հայաստանն ունի ածխի որոշ պաշար, սակայն արդյունահանող չէ: Ներմուծվում են նավթ, նավթամթերք, բնական գազ, մասնավորապես ՌԴ-ից և Եվրոպայից՝ Վրաստանի տարածքով, և որոշ քանակությամբ գազ Իրանից [5]: Ներմուծվող բնական գազը և նավթամթերքները կազմում են ՀՀ Էներգիայի առաջնային աղբյուրների շուրջ երկու երրորդը, իսկ ՌԴ-ից ներմուծվող գազը՝ ներմուծվող Էներգառեսուրսների 80%-ը: Ներմուծված բնական գազի 30%-ն օգտագործվում է էլեկտրաէներգիայի արտադրության նպատակով [3]:

Գիտակցելով երկրում առկա խնդիրների կարևորությունը իրականացվել են բազմաթիվ ծրագրեր երկրում վերականգնվող Էներգետիկայի մակարդակի բարձրացման և Էներգախնայողության խթանման ուղղությամբ:

Մասնավորապես, Դանիշ Էներջի Մենեջմենթը նկերության կողմից 2011 թվականին կազմվել է ՀՀ-ում ՎԷՁՈԻԾ [6]: Ծրագրի նպատակն էր ներկայացնել Հայաստանում տեխնիկապես, տնտեսապես հասանելի և ֆինանսապես շահավետ վերականգնվող Էներգիայի պոտենցիալը, ինչպես նաև սահմանել վերականգնվող Էներգիայի զարգացման նպատակները կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում:

ՀՀ ՎԷՁՈԻԾ-ի թերևս կարևորագույն արդյունք է հանդիսանում արդի Էներգետիկ ոլորտում վերականգնվող Էներգիայի ներթափանցման մակարդակի ազգային թիրախների որոշումը: Էներգետիկ ոլորտ ՎԷ-ի ներթափանցման մակարդակի

համար ազգային թիրախ են հանդիսանում 2020թ-ին՝ 4.9% (դիտարկումների հիմնական սցենար): Ընդ որում, եթե հաշվի են առնվում միջին և մեծ հզորությամբ հիդրոէլեկտրակայանները, ինչպես նաև կենսազանգվածը, ապա ՎԷ ներթափանցման մակարդակի համապատասխան ցուցանիշը կկազմի ավելի քան 16%:

ՎԷՁՈԼԾ-ի դիտարկումների համաձայն (հիմնական սցենար) սկսած 2017թ.-ից Հայաստանը կունենա մոտ 2000 ԳՎտժ էլեկտրաէներգիայի ավելցուկ: Այս ներուժի յուրացումը ծրագրում դիտարկվում է որպես էլեկտրաէներգետիկայի բնագավառում տարածաշրջանային խորը համագործակցության հիմք՝ առաջին հերթին Հայաստան-Իրան, Հայաստան-Վրաստան, Հայաստան-Թուրքիա ուղղությամբ: Ծրագրում բերված ցուցանիշներին հասնելու համար անհրաժեշտ է օրենսդրական դաշտի հետագա բարեփոխում և ՎԷ-ի զարգացումը խոչընդոտող արգելքների հաղթահարում: Ծրագրում վեր էին հանվել Հայաստանում ՎԷ-ի զարգացման խոչընդոտները՝ կապված թույլ տվող յուրահատուկ ստացման բարդությամբ, ներդրումային ռիսկերի պատշաճ բաշխման, հարկային օրենսդրության և այլնի հետ:

Հաշվի առնելով, որ Հայաստանում էլեկտրաէներգիայի արտադրության 70%-ը կախված է ներմուծվող վառելիքից, և այն, որ 2020 թվականին կանխատեսվում է էլեկտրամատակարարման հզորության շուրջ 400 ՄՎտ հզորության պակասորդ, Համաշխարհային Բանկի կողմից 2013 թվականին իրականացվել է «Վերականգնվող էներգետիկայի ընդլայնման ծրագիրը և Հայաստանի էներգետիկ անվտանգության բարձրացումը» թեմայով վերլուծությանը [7]: Ծրագրի նպատակն է խթանել Հայաստանում մասնավոր ներդրումները վերականգնվող էներգիայի տեխնոլոգիաներում,

որոնք փորձի բացակայ ության, բարձր կապիտալ ծախսերի և այլ բազմազան պատճառներով չեն դիտարկվել որպես երկրում կիրառելի տարբերակներ: Հետագոտություն արդյունքում ձևավորվել են հետևյալ երեք առաջնահերթություններ.

1. Երկրաչերմային էներգետիկայի զարգացում: ՎԷԸԾ-ի միջոցները պետք է օգտագործվեն մակերևութային հետախուզման միջոցով Հայաստանում համակողմանի ուսումնասիրված ամենանպաստավոր երկրային տեղանքի՝ Քարքարի, հետագա հետախուզման համար: Անհրաժեշտ է հետախուզական հորատում իրականացնել և պարզել էլեկտրաէներգիայի արտադրություն համար ռեսուրսների առկայությունը և որակը: Օգտագործելով հորատման երաշխիքները կամ ՎԷԸԾ-ի դրամաշնորհային ֆինանսավորումը՝ ՀՀ կառավարությունը կարող է օժանդակել տեղանքի զարգացման ռիսկերի նվազեցմանը:

2. Արդյունաբերական մասշտաբի արևային ՖՎ կայանների զարգացում: Հաշվի առնելով, որ արևային ՖՎ կայանները դարձել են առավել մրցունակ և մատչելի, ՎԷԸԾ-ի ռեսուրսները պետք է օգտագործվեն զարգացնելու մոտավորապես 30 ՄՎտ արդյունաբերական մասշտաբի արևային ՖՎ կայաններ: Նախնական արդյունքներով Հայաստանում արևային ՖՎ առավել բարձր ներուժի մի մասը ՀՀ Գեղարքունիքի մարզում է, որը պետք է դիտարկվի որպես զարգացման առաջին հավանական տարածք: ՎԷԸԾ-ի օժանդակությամբ կմեծանան որ էլեկտրակայաններում ներդրումների գրավչությունը և դրանց առևտրային հիմունքներով օգտագործելու ներուժը:

3. Ապակե նտրոնացված երկրաչերմային պոմպերի և արևային-ջերմային նախագծերի զարգացում:

Հայաստանում արևային ջերմային և երկրաջերմային ռեսուրսների ներուժը մեծ է, սակայն բավականաչափ ֆինանսավորման բացակայության պատճառով այս տեխնոլոգիաների կիրառումը դեռևս լայն տարածում չունի, վերջինը Հայաստանի երկրաջերմային ջեռուցման ընկերությունների կողմից տվյալ տեխնոլոգիայի կիրառման գլխավոր խոչընդոտներինց է: ՎԷԸԾ-ի միջոցները պետք է օգտագործվեն երկրաջերմային ջեռուցման և հովացման, արևային ջրատաքացուցիչ համակարգի կենսունակությունը արդյունաբերական ձեռնարկություններում, առևտրային և բնակելի շենքերում ներկայացնելու համար: Չարգացման բազմակող բանկերը, որոնք առևտրային բանկերին վարկեր են տրամադրում կարող են այնուհետև ընդլայնվել և ներառել այս նոր տեխնոլոգիաները և խթանել մասնավոր ներդրումները:

Սպասվում է, որ 40 մլն. ԱՄՆ դոլարի չափով ՎԷԸԾ ֆինանսավորումը կներգրավի մոտ 4.5 միլիարդ մասնավոր շատ ներդրումներ՝ մեծամասամբ մասնավոր հատվածի կողմից, և կխթանի առևտրային վարկավորումը:

ՀՀ կառավարությունը առաջնային է համարում էներգախնայողությունը որպես երկրների էներգետիկ անվտանգության, տնտեսական մրցակցության մեծացման միջոց: Ուստի ՀՀ կառավարության կողմից հաստատվել է ՀՀ էներգախնայողության և վերականգնող էներգետիկայի ազգային ծրագրի կատարման նույնված ՀՀ կառավարության գործունեության ծրագիրը [8]: Հիմնվելով էներգախնայողության և վերականգնող էներգետիկայի ազգային ծրագրի վրա ՀԲ-ն 2008 թվականին իրականացրել է ուսումնասիրություն, որի արդյունքներով

Հայաստանը, Էներգախնայողություն
միջոցառումներն իրականացման արդյունքում
կարող է խնայել 1,21 մլն. տոննա նավթային համարժեք
տարեկան, կամ 600 մլն. մ³ բնական գազ:

Ծրագրում վերեն հանված Էներգախնայողության
խոչընդոտները, ինչպիսիք են օրենսդրական դաշտի
անկատարությունը, Էներգախնայողության
հաղորդակցության համար թույլ ինստիտուցիոնալ
կառուցվածքը, հասարակության
տեղեկացվածության ցածր մակարդակը և այլն:
Առաջարկվել են մի շարք ուղորդողներ՝
արդյունաբերություն, տրանսպորտ, ջրային
տնտեսություն, քաղաքաշինություն և այլն,
Էներգախնայողության բարելավմանն ուղղված
միջոցառումներ:

Հաշվի առնելով նշված ծրագրերում
ներկայացված առաջարկները և մատնանշված
խոչընդոտները վերջին տարիներին բազմաթիվ
միջոցառումներ են իրականացվել ՀՀ-ում ՎԷ-ի
զարգացման խթանման և Էներգախնայողության
մակարդակի բարձրացմանն ուղղությամբ,
մասնավորապես վերանայվել են ՎԷ ռեսուրսներ
օգտագործող ինքնավար Էներգատադրողներին
վերաբերող իրավակարգավորումները, համաձայն
որի սեփական կարիքները բավարարելու համար
առանց որևէ լիցենզավորման պահանջի կարելի է
տեղադրել մինչև 500 կՎտ հզորությամբ արևային
ինքնավար կայաններ, արտադրել էլեկտրաէներգիա,
իսկ ավելցուկը վաճառել «Հայաստանի էլեկտրական
ցանցեր» ՓԲԸ-ին, ինչը կխթանի ինքնավար
արտադրողներին ինստիտուտի կայացումը երկրում:
Հաստատվել են նաև Հայաստանում
արդյունաբերական մասշտաբի «Մասրիկ-1» արևային
ֆոտովոլտային ծրագրի շրջանակում ապագա

կառուցապատող (ներդրող) ընկերության
լիցենզիայի պայմանները:

1.2 Ե ն եր գ ե տի կ շ ու կ ան եր ի գ ար գ աց ու մ ը : 33

Ե ն եր գ ե տի կ շ ու կ ան և դ ր ա գ ար գ աց մ ան

հ եռ ան կ ար ն եր ը

Էլեկտրաէներգետիկայի ոլորտը զարգացած երկրներում Եական փոխակերպումներ է կրել՝ անցնելով լուրջ արտադրող տեղակայանքներից մինչև խոշոր պետական և միջպետական էներգամիավորումների [9]: ԵԷՀ-ի և դրանց միավորումների ստեղծման և ընդլայնման հետ կապված ինտեգրման գործընթացի հիմք են հանդիսացել վառելիքաէներգետիկ ռեսուրսների անհամաչափ բաշխվածությունը, ԵԷՀ-ի տեխնիկատնտեսական ցուցանիշների լավարկումը առանձին գործող կայանների համեմատությամբ, Ե ն եր գ ա մ ա տ ա կ ար ար մ ան ուրակի և հոսսալիության բարձրացումը, Էլեկտրաէներգետիկայի ենթակառուցվածքային դերի բարձրացումը և այլն [10]:

ՍՍՀՄ Էլեկտրաէներգետիկայի ազգայնացման խթաններն այլ Էին, այլ Էին նաև Էլեկտրաէներգետիկայում տնտեսական հարաբերությունները: Սակայն նման Էին ոլորտում կառուցվածքային փոխակերպումները [11]: Նախորդ դարի 70-ական թվականներին բազմաթիվ մասնագետների կողմից ընդունվել էր, որ ԵԷՀ-ի գործունեության և զարգացման ստեղծված ինստիտուցիոնալ միջավայրը բազմաթիվ բացասական գործոններ էր կուտակել և խոչընդոտում էր Էլեկտրաէներգիայի արտադրության և սպառողների Էլեկտրաէներգիայի մատակարարման արդյունավետության բարձրացմանը, նոր պրոգրեսիվ Ե ն եր գ ե տի կ

տեխնոլոգիաների ներդրմանը և այլն [12]: Նշված գործոնները հաղթահարելու նպատակով 1980-1990-ական թվականներին իրականացվեցին ինստիտուցիոնալ փոփոխություններ, առանձնացվեցին պոտենցիալ մրցակցային (արտադրություն, սպառում, ծառայություն) և բնական մենաշնորհային (հաղորդում, բաշխում, կարգավարական կառավարում) գործունեություններ: Պոտենցիալ մրցակցային միջավայրում ներդրվեցին շուկայական մրցակցային մեխանիզմներ:

Շուկայական փոխակերպումների փորձը երկրների մեծամասնությունում ցույց տվեց, որ նախնական պատկերացումը գուտ շուկայական ուժերի արդյունավետությանը ԷԷՀ-ի գործունեության և հատկապես զարգացման գործընթացում արդարացված չէր և գնահատվեց այդ շուկաների մեղմ կարգավորման կարևոր դերը՝ համապատասխան պետական քաղաքականության իրականացմամբ: Ներկայումս կարելի է ընդունված համարել այն փաստը, որ ԷԷՀ-ի արդյունավետ գործունեության և զարգացման տեսանկյունից առավել ռացիոնալ է շուկայական մեխանիզմների և պետական կարգավորման համատեղությունը: Հարկ է նշել, որ այդպիսի ռացիոնալ համատեղություն որոշումը ոչ պարզ խնդիր է և յուրաքանչյուր երկրի համար իր յուրահատկություններն ունի, ելնելով տնտեսության և էլեկտրաէներգետիկայի բնագավառի յուրահատկություններից:

Ընդհանուր առմամբ առանձնացվում են շուկաների կազմակերպման հիմնական չորս մոդելներ [13].

- կարգավորվող մենաշնորհներ,
- միակ գնորդ, երբ մեծածախ շուկայում միմյանց հետ մրցակցում են միայն էլեկտրաէներգիա արտադրողները,

- մրցակցային մեծածախշուկա, երբ առկա են մի քանի արտադրողներ և գնորդներ (բաշխիչ ընկերություններ),
- մրցակցային մանրածախշուկա (ինչպես նաև մեծածախ), երբ միմյանց հետ ազատ մրցակցում են ինչպես արտադրողներն, այնպես էլ էլեկտրաէներգիայի սպառողները:

Էլեկտրաէներգետիկական շուկաների կառուցվածքների վերլուծությունը ցույց է տալիս, որ երկրների մած մասը հրաժարվել է էլեկտրաէներգետիկայի ոլորտի ուղղահայաց ինտեգրված կառուցվածքից, որը դիտարկվում էր որպես բնական մենաշնորհ: Նշված հանգամանքները խթան հանդիսացան ոլորտում բարեփոխումների իրականացման համար, ինչն էլ իր հերթին նպաստեց նախորդ հարյուրամյակի վերջում, զարգացած երկրների կողմից ոլորտի բարեփոխման քայլերի ձեռնարկմանը: Որպես բարեփոխման առաջնային խնդիր կարելի է առանձնացնել էներգահամակարգի արդյունավետության բարձրացումը՝ մենաշնորհային ձեռնարկությունների կազմից մրցակցային ձեռնարկությունների առանձնացումը (Չիլի, Սկանդինավյան երկրներ) և (կամ) նշված ոլորտն որ մասնակիցների, անկախ մատակարարների ներգրավվելու իրավունքի տրամադրումը (ԱՄՆ), ինչպես նաև էլեկտրաէներգետիկական շուկաների ազատականացումը [14]:

Հարավային Կովկասի երկրներում՝ Հայաստանում, Վրաստանում և Ադրբեյջանում ընդհանուր առմամբ բարեփոխումները իրագործվում էին մասնավորեցման տեսքով: Վրաստանում բարեփոխումները սկսվեցին 1997թ-ին՝ արտադրող և բաշխիչ ընկերությունների մասնավորեցմամբ: Ադրբեյջանում բարեփոխումների հանգուցային խնդիրներից էր բաշխիչ ընկերությունների

անջատումը արտադրող և հաղորդող ընկերություններից, և դրանց մասնավորեցումը:

Ինչ վերաբերում է Հայաստանին, երկրի անկախացումից հետո ծագած էներգետիկ ճգնաժամի անհապաղ վերացման անհրաժեշտությունը հանգեցրեց նրան, որ ՀՀ կառավարությունը սկսեց էներգետիկ ոլորտի հիմնովին բարեփոխումներ իրականացնել: Բարեփոխման ծրագրի կենտրոնում էին աստիճանաբար անցում դեպի ինքնարժեքի վրա հիմնված սակագներ, պետական սեփականություն հանդիսացող մենաշնորհային էներգահամակարգի տրոհում, առաջացած ձեռնարկությունների ապապետականացում և մասնավորեցում, կարգավորման և կառավարման նոր եղանակների ներդրում [15]:

Կենտրոնական և կառուցվածքային, կարգավորող և իրավական բարեփոխումների վրա, առանձնահատուկ նշանակություն էր տրվել էներգետիկայի ֆինանսական կայունության ապահովմանը, մասնավորապես տեխնիկական կորուստների նվազեցմանը և վճարների հավաքագրման բարձրացմանը:

ՀՀ Էլեկտրաէներգետիկ շուկայում Էլեկտրաէներգիայի առք ու վաճառքն իրականացվում էր «ՀՀ էներգետիկայի մասին» օրենքին [16] համապատասխան գործունեության լիցենզիա ունեցող անձանց կողմից՝ լիցենզիայի պայմաններին և շուկայի կանոններին համապատասխան: Մեծածախ շուկայում գործող արտադրողներն Էլեկտրական էներգիան և (կամ) հզորությունը վաճառում են միակ գնորդ հանդիսացող «Հայաստանի Էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը, որն ունի ՀՀ տարածքում Էլեկտրաէներգիայի բաշխման բացառիկ իրավունք:

«Բարձրավճար էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն
իրականացնում է

Էլեկտրական էներգիայի (իզոբոլայան) հաղորդման
ծառայություններ, ինչպես նաև հողմաէլեկտրակայանի
միջոցով էլեկտրաէներգիայի արտադրություններ :

«Էլեկտրաէներգետիկական համակարգի
օպերատոր» ՓԲԸ իրականացնում է համակարգի
օպերատիվ տեխնոլոգիական և տնտեսական
կարգավարում, համակարգային նշանակություն
կառավարման և պաշտպանություն սարքերի
նախադրվածքների հաշվարկում, դրանք
լիցենզավորված անձանց առաջադրման և դրանց
աշխատանքի հսկման գործառնություն, և ունի
տարածաշրջանային էլեկտրաէներգետիկական
համակարգերի հետ ՀՀ ԷԷՀ գույքահեռ աշխատանքի
ապահովման բացառիկ իրավունքներ և այլ
գործառնություններ, ինչպես նաև մշակում է
համակարգի անվտանգություն և հուսալիություն
ցուցանիշները, որոնք հաստատում են
հանձնաժողովը և ՀՀ կառավարության կողմից
լիազորված մարմինը :

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ գործունեության
հիմնական ուղղություններն են հաշվառել
արտադրված, առաքված, ներկրված, արտահանված և
բաշխողի կողմից գնված էլեկտրաէներգիան
(իզոբոլայան), կազմել էլեկտրաէներգիայի
(իզոբոլայան) առքուվաճառքի ակտերը,
էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում
հաշվարկել և հաշվառել էլեկտրական էներգիայի
տեխնոլոգիական անխուսափելի և փաստացի
կորուստները մեծությունները, հաշվառել
տարածաշրջանային էլեկտրաէներգետիկական
համակարգերի հետ միջհամակարգային
հոսանքահաղորդումները, շահագործել և պահպանել
էլեկտրաէներգետիկական համակարգի

Էլեկտրաէներգիայի (հզորություն) առևտրային ավտոմատացված համակարգը, համաձայնեցնել և կոորդինացնել Էլեկտրական Էներգիայի (հզորություն) հաշվառման առևտրային և հսկիչ սարքերի արտապլանային և պլանային ստուգումները:

ՀՀ-ում Էներգետիկայի պետական կարգավորումն իրականացվում է ՀՀ ԷԲՊՆ և ՀՀ ՀԾԿՀ կողմից: ՀՀ ՀԾԿՀ-ն իրականացնում է գործունեության լիցենզավորումը, լիցենզիայի պայմանների սահմանումը և դրանց վերահսկումը, սահմանում է կարգավորվող սակագները, սահմանում է շուկայի կանոնները և կարգերը, սպասարկման որակի նկատմամբ պահանջները և այլն [17,18]:

ՀՀ Էներգահամակարգի միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածներում Էներգետիկ համակարգի զարգացումն ապահովելու նպատակով նախատեսվում է մինչև 2025 թվականը իրականացնել շուկայի բարեփոխումներ, մասնավորապես իրականացնել ՀՀ Էլեկտրաէներգետիկական շուկայի փուլային ազատականացում՝ արդյունավետության բարձրացման և ներդրումների խթանման նպատակով: 2017 թվականի ընթացքում վերանայվել է «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքը [16]՝ ներդնելով Էլեկտրաէներգետիկական շուկայի առավել արդյունավետ աշխատանքին ուղղված կարգավորման նոր գործիքներ, որոնք հնարավորություն կստեղծեն իրականացնել Էլեկտրաէներգետիկական շուկայի իրավակարգավորումներում նախատեսված բարեփոխումները՝ միջազգային առաջավոր փորձին համապատասխան: Էլեկտրաէներգետիկական շուկայի աստիճանական ազատականացմանն ու միջպետական առևտրի խթանմանն ուղղված աշխատանքների շրջանակում 2016 թվականին մշակվել և հաստատվել են

Էլ Եկ տրաէն Երգ Ետիկ ական համակարգում
որակավորված սպառողին և որակավորված
մատակարարին Էլ Եկ տրական Են Երգիայի հաղորդման
և բաշխման ցանցերում և տքի իրավունքի տրամադրման
անցումային կանոնները և Էլ Եկ տրական Են Երգիայի
բաշխման ծառայություն մատուցման (բաշխող-սպառող
(որակավորված սպառող)) և հաշվեկշռման
ծառայություն մատուցման պայմանագրերի
օրինակելի ձևերը

2017 թվականին, մեկ փաստաթղթում ամփոփելով
իրենց բնույթով շուկայի կանոն հանդիսացող
կարգերն ու կանոնները, մշակվել և հաստատվել են
ՀՀ Էլ Եկ տրաէն Երգ Ետիկ ական մեծածախ շուկայի
Ժամանակավոր առևտրային կանոնները, որոնցով
սահմանվում են ՀՀ Էլ Եկ տրաէն Երգ Ետիկ ական
մեծածախ շուկայի մասնակիցները և կառուցվածքը,
ինչպես նաև կանոնակարգվում են շուկայի
մասնակիցների հարաբերությունները:

Հաստատվել են Էլ Եկ տրաէն Երգ Ետիկ ական
համակարգի ցանցային կանոնները [19], որով մեկ
միասնական փաստաթղթում համախմբվել են
համակարգի պլանավորման, կարգավարման ու
շուկայի մասնակիցների միջև տեխնիկական
բնույթի փոխհարաբերությունները
կանոնակարգող իրավադրույթները:

Ներկայումս Հայաստանում շարունակվում են
Էլ Եկ տրաէն Երգ Ետիկ ական շուկայում
մրցակցության խթանմանն ուղղված աշխատանքները,
ինչպես նաև մրցակցության բարձրացված
միջոցառումները:

Երկարաժամկետ կտրվածքով շատ խնդիրներ կան
Են Երգ ահամակարգի հոլսալի և անխափան աշխատանքի
հետագա ապահովմանն ուղղված թյամբ, մասնավորապես՝
կանխատեսվող հզորությունների պահանջարկի
ծածկման, տարածաշրջանային ինտեգրման

գործընթացի կարգավորման, մրցակցության մակարդակի բարձրացման և այլն, ինչն առավել արդիական է դառնում վերոնշյալ փոփոխություններին ընթացքում:

1.3.3.3 Էներգահամակարգի զարգացման ծրագրեր

Տարբեր ժամանակահատվածներում երկրի էներգահամակարգի գերակա նպատակներին օպտիմալ և ժամանակին լուծումներ գտնելու, անհրաժեշտ առանցքային բարեփոխումներ իրականացնելու, քաղաքականության գործիքները, ինչպես նաև հիմնական ռիսկերը վերհանելու նպատակով ՀՀ կառավարության և ՀՀ ԷԲՊԼ նախաձեռնություններ, տարբեր տեղական և արտասահմանյան կազմակերպություններին հետհամատեղ, կազմվել են էներգահամակարգի հեռանկարային զարգացման միջարժեք ծրագրեր: Սույն ատենախոսության մեջ իրականացված հետազոտություններին ընթացքում հաշվի են առնված ինչպես մինչև 2008 թվականն իրականացված ծրագրերում բացահայտված խնդիրներին հիման վրա իրականացված հետազոտություններին արդյունքները [20], այնպես էլ 2008 թվականից հետո իրականացված ծրագրերում բացահայտված խնդիրները: Ստորև բերված են այդ ծրագրերի հակիրճ վերլուծությունը և բացահայտված խնդիրները:

- Հայաստանի Պետական ճարտարագիտական Համալսարան, «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի մինչև 2010թ. զարգացման միտումներին քանակական գնահատումը», Երևան, 1999թ. [21]: Մինչև նշված աշխատանքը իրականացվել էին զարգացման այնպիսի ծրագրեր, որոնց համար նպատակային են

Եղել սեղմ քանակի խնդիրների լուծումը : Աշխատանքի հիմնական նպատակն էր Էլեկտրաէներգետիկայի, ինչպես նաև բնական գազի ոլորտների զարգացման հնարավոր տարբերակների ուսումնասիրությունը :

- ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (այսուհետ՝ ՄԶԳ) - Հագլեր Բայի «Նվազագույն ծախսումներով արտադրության պլան», 2000թ. [22]: Այս հետազոտության նպատակն էր գնահատել Էլեկտրաէներգիա արտադրող կայանների զարգացման համար անհրաժեշտ ներդրումային պահանջները : Ծրագրում դիտարկվել էր Հայկական ԱԷԿ-ը 2004 թվականին շահագործումից հանելու նախապայմանը : Ներկայացված էին երկու սցենարներ՝ ռազմավարական գերակայություններն անտեսող սցենար, որով ատոմային կայանի կառուցում էր նախատեսվում, քանի որ տնտեսապես ոչ մրցունակ էր, և ռազմական գերակայություններին սցենար, որով նախատեսվում էր Մեղրու, Ծնողի ՀԷԿ-երի շինարարություն 2007 թվականից և Լոռի բերդ ՀԷԿ-ի շինարարություն 2008 թվականից : Հաշվի առնելով ծրագրում ընդունված ՀԱԱ-ի աճի, արդյունաբերության զարգացման ցածր տեմպերը, ինչպես նաև Էլեկտրակայաններում սպառվող բնական գազի ընդունված ցածր արժեքը, հետազոտության արդյունքներից որոշները անընդունելի համարվեցին :

- ԱՄՆ ՄԶԳ - ՓԷ Կոնսալտինգ Գրուպ «Նվազագույն ծախսումներով արտադրության պլան», 2002թ. [23]: Այս հետազոտության մեջ հաշվի էին առնվել նախկինում ստացված որոշ եզրակացություններ, ինչպես նաև պահպանվել էին ներքին համախառն արտադրանքի, արդյունքում նաև Էլեկտրական Էներգիայի

պահանջարկի աճի հոռետեսական գնահատումը :
 Հետազոտությունն հիմնականն պատակն էր
 գնահատել ներդրումային ծրագրերի
 իրականացման և Հայկական ԱԵԿ-ի աշխատանքի
 դադարեցման ազդեցությունը
 Էլեկտրաէներգիայի սակագների վրա: Համաձայն
 հետազոտությունն արդյունքների Հայկական ԱԵԿ-ի
 աշխատանքի դադարեցումը խիստ բացասական
 ազդեցություն և կունենա սակագների
 կայունությունն ապահովման վրա:

- Ատոմային էներգիայի միջազգային
 գործակալություն (ԱԵՄԳ), «Հայաստանում
 էներգետիկայի, ներառյալ միջուկային
 էներգետիկան, զարգացման պլանավորման
 ուսումնասիրություն 2000-2020թթ.» [24]: Աշխատանքի
 նպատակն էր վերլուծել Հայաստանի էներգիայի և
 Էլեկտրաէներգիայի պահանջարկը սոցիալ-
 տնտեսական զարգացման հնարավոր
 տարբերակներում, մշակել էներգահամակարգի
 զարգացման տնտեսապես օպտիմալ պլանը,
 գնահատել ատոմային էներգետիկայի դերը՝
 Էլեկտրաէներգիայի համակարգի նվազագույն
 ծախսերով զարգացման ծրագրից: Աշխատանքի
 շրջանակներում կատարված մանրակրկիտ
 հետազոտությունները ցույց տվեցին, որ
 էներգիայի (այդ թվում նաև Էլեկտրաէներգիայի)
 պահանջարկը դիտարկվող ժամանակահատվածում
 կաճի տարեկան մոտ 6-7%: Համապատասխանաբար
 կվելանան նաև էներգետիկական ոլորտի
 գործունեությունն արդյունքում
 արտանետումները շրջակա միջավայր:

- «Էներգետիկայի ոլորտում հայ-իրանական
 փոխշահավետ համատեղ նախագծերի
 հեռանկարները», 2008թ. [25]: Այս աշխատանքում
 ամփոփվել են բոլոր նախկինում կատարված

հետազոտությունները, որոնք բխում են հայ-իրանական փոխշահավետ համատեղ նախագծերի իրականացման նպատակներից:

Հետազոտությունները հաստատեցին, որ Հայաստանի Էլեկտրաէներգիայի պոտենցիալը զգալի է տարածաշրջանում Էլեկտրաէներգիայի արտահանման տեսանկյունից:

Վերլուծությունների արդյունքում, Էներգետիկայի ոլորտում առաջարկվել են զարգացման հետևյալ ուղղությունները. տեղակայված միջուկային հզորության ընդլայնումը մինչև 2000 ՄՎտ՝ տեղական պահանջարկի բավարարման և հարևան երկրներ Էլեկտրաէներգիայի արտահանման համար, վրացական Էլեկտրաէներգիայի արտահանում դեպի Իրան՝ հայկական Էլեկտրացանցերով, Իրանի և ՌԴ-ի Էլեկտրական ցանցերի միացում՝ հայկական Էլեկտրական ցանցերի միջոցով, Իրանի բնական գազի արտահանումը դեպի Եվրոպական շուկա՝ Հայաստանով անցնող նոր գազամուղի միջոցով:

- ՀԲ «Պարտադրված որոշումներ: Դժվար ընտրություններ Հայաստանի Էներգետիկ ոլորտում», 2011 թ. [26]: Համաձայն վերլուծության Հայաստանի համար մոտակա 20 տարիների համար հիմնական խնդիրներ են հանդիսանում հոսսալի Էներգամատակարարման ապահովումը, Էներգետիկ ապահովվածության երաշխավորումն ու Էներգիայի մատակարարումը սպառողներին մատչելի պահել՝ ապահովելով ոլորտի ֆինանսական կայունությունը: Հաշվի առնելով կանխատեսումները, Հայկական ատոմային Էլեկտրակայանի շահագործումից հանվելուց հետո Հայաստանը կարող է ունենալ շուրջ 800 ՄՎտ հզորության պակասորդը: Մատակարարման արդյունավետության տեսանկյունից խոշոր

գազային էլեկտրակայանի կամ մի շարք փոքր գազային կայանների կառուցումը ժամանակի ընթացքում կարող են առումային կայանի այլ ընտրանք հանդիսանալ: Կանխատեսվող տեղակայված հզորությունները համեմատվել են մինչև 2029 թվական պահանջարկի հետ երեք սցենարներով՝ կախված ՀՆԱ-ի կանխատեսման տեմպերից: Վերլուծաբանները դիտարկում են նոր գազային կայանի միջոցով բեռի ծածկման տարբերակ՝ 800 ՄՎտ հզորությամբ հղումային կամ միջին կանխատեսումային սցենարների համար և 1100 ՄՎտ՝ բարձր աճի տեմպերով սցենարի համար: Մյուս հնարավոր տարբերակում դիտարկվում է 1100 հզորությամբ առումային կայանի փոխարինումը 550 ՄՎտ վերականգնվող հզորություններով և 110 ՄՎտ էներգաարդյունավետության արդյունքում տնտեսված հզորությամբ: Վերջին տարբերակը դիտարկում է օպտիմալ հզորությամբ գազային կայանի և վերոնշյալ էներգաարդյունավետության հզորությունների իրականացումը: Բոլոր նշված տարբերակները բավարարում են հղումային և միջին սպառման սցենարներին, իսկ Գազ+ՎԷ+ԷԱ և ԱԷԿ+ՎԷ+ԷԱ կոմբինացիաները բավարարում են նաև պիկային սցենարներին:

- ՀԲ «Հայաստանի էլեկտրաէներգետիկական ոլորտի քաղաքականությամբ վերաբերյալ տեղեկանք» 2014թ. [27]: Այս տեղեկանքի նպատակն է տեղեկատվական օժանդակություն և ցուցաբերել ՀՀ կառավարությանը քաղաքականության մշակման հարցում՝ բացահայտելով էլեկտրաէներգետիկայի ոլորտի առջև ծառացած հիմնական մարտահրավերները և ուրվագծելով դրանց հաղթահարման ուղիները: Սույն տեղեկանքում քննարկում են նաև գազի սակագնի

կառուցվածքին և պահանջարկին վերաբերող
խնդիրներ:

- ԱՄՆ ՄԶԳ «ՀՀ Էներգետիկ համակարգի նվազագույն
ծախսերով զարգացման ծրագիր 2015թ. [28]: Նախագծի
հիմնական նպատակն է երկրի Էներգետիկայի
զարգացման ռազմավարական ներկայացումը՝
հաշվի առնելով վերջին տարիներին
տնտեսական զարգացումը, պաշարների և
տեխնոլոգիաների առկա պոտենցիալը:
Դիտարկվել են մի քանի այլընտրանքային
սցենարներ, որոնք վերլուծվել են
Էներգահամակարգի տարբեր հանգուցային
տեխնիկական և տնտեսական ցուցանիշների և
երկրի Էներգետիկ անվտանգության ու
անկախության վրա դրանց ազդեցությունը
գնահատման նպատակով: Հղումային սցենարում
կատարվել են հետևյալ ենթադրությունները.
Հայաստանի և Իրանի միջև էլեկտրական Էներգիան
գազի դիմաց փոխանակման համաձայնագիրը
գործում է մինչև 2026թ. և դրանից հետո դառնում է
ոչ պարտադիր, Հայկական ԱԵԿ-ի կյանքը
կերկարացվի մինչև 2026, նոր 1 000 ՄՎտ հզորության
ատոմային էլեկտրակայանը կկառուցվի մինչև 2027
թվականը, բնական գազի գինը կձևավորվի ըստ
Ռուսաստանի Դաշնության հետ ձեռք բերված
համաձայնությունների, հնարավորություն
կլինի Վրաստանի հետ իրականացնել
ԷլեկտրաԷներգիայի փոխհոսքեր մինչև 2 մլն.
կՎտժ: Այլընտրանքային սցենարներում
դիտարկվել են ատոմակայանի կյանքը
չերկարացնելու, բնական գազի գինը մինչև
եվրոպական գներին աճելու,
Էներգախնայողություն և վերականգնող
Էներգետիկայի զարգացման տարբեր տեմպերի,
ինչպես նաև Վրաստանի հետ փոխհոսքերի

բացակայություն և այլ տարբերակները :
Վերլուծություն արդյունքները ցույց են տվել ,
որ ներկայացված ծրագիրն Յայաստանում
իրագործելու նպատակով անհրաժեշտ է
գործողություններ իրականացնել Յակական
ԱԵԿ-ի կյանքի երկարացման , հայ-իրանական
փոխհարաբերություններին ընդլայնման
ուղղությամբ , զարգացնել Վրաստանի հետ
փոխհոսքերի հնարավորությունը , կարճաժամկետ
հեռանկարում կառուցել նոր համակցված ցիկլով
գազատուրբիններ , ավելացնել միջին
հզորությամբ ՅԵԿ-երի կշիռը , զարգացնել
այլ ընտրանքային էներգետիկան , ինչպես նաև
քայլեր ձեռնարկել նոր ԱԵԿ-ի կառուցման
ուղղությամբ :

Համաձայն նշված ռազմավարական զարգացման
փաստաթղթերի՝ ՀՀ էներգետիկայի բնագավառում
հեռանկարում անհրաժեշտ է նախատեսել միջարք
տարբեր տիպի նոր էլեկտրակայանների կառուցում ,
էլեկտրաէներգիա հաղորդող ցանցի
արդիականացում և հետագա զարգացում ,
միջհամակարգային հաղորդման գծերի կառուցում՝
հարևան երկրներին էլեկտրաէներգիա
արտահանելու նպատակով , էլեկտրաէներգիաբաշխող
ցանցի արդիականացում , էներգախնայողության
միջոցառումների իրականացումն այլն :

Հաշվի առնելով , 2013-2014թթ . ընթացքում ՀՀ
վաճելիքաէներգետիկ շուկայում և էներգետիկ
համակարգում կիրառվող տեխնոլոգիաների
ոլորտում արձանագրված զարգացումները [29],
ինչպես նաև տարածաշրջանային ինտեգրման
խորացման և ընդլայնման նկատվող ՀՀ
կառավարությունը 2015 թվականի դեկտեմբերի 10-ին
հավանություն է տվել «Յայաստանի
Հանրապետության էներգետիկ համակարգի

Երկարաժամկետ (մինչև 2036 թ.) զարգացման ուղիները» ծրագրին [30]:

Ծրագրում դիտարկվել են մի քանի սցենարներ: Որպես հիմնական դիտարկվել է հղումային սցենարը, որում ընդունված նախապայմաններին ՌԴ-ից ներմուծվող բնական գազի գներին կիրառում՝ համաձայն գործող պայմանագրի, գործող առումային բլոկի շահագործման ժամկետի երկարաժամկետ մինչև 2027թ., մինչև 2026թ. Իրան-Հայաստան միջպետական համաձայնագրի պայմանների կատարում, 2027թ.-ից հետո պայմանների պահպանում՝ տնտեսապես արդյունավետ լինելու դեպքում, 2027թ.-ից նոր՝ 1000 ՄՎտ հզորությամբ առումային բլոկի շահագործման հանձնում, Վրաստանի Հանրապետությունից Էլեկտրաէներգիայի ներմուծման հնարավորությունն քաղաքացիական: Բացի հղումային սցենարից դիտարկվել են նաև հետևյալ հիմնական լրացուցիչ սցենարները.

- Առանց նոր առումային Էլեկտրակայանի (այսուհետ՝ ԱԷԿ) սցենար, երբ 2027 թվականից հետո քաղաքացիական է առումային բլոկը:
- Էլեկտրաէներգիայի ներմուծման սցենար, համաձայն որի նախատեսվում է Վրաստանից տարեկան 2,2 մլրդ. կՎտժ Էլեկտրաէներգիայի ներմուծման հնարավորություն:
- Հայկական ԱԷԿ-ի կյանքի չերկարացմամբ սցենար, երբ բերվող առումային բլոկի շահագործման ժամկետի երկարացման ծրագիրը չի իրականացվում և 2017 թվականից ՀԱԷԿ-ը չի գործում:

Նշված ծրագրերում մանրամասն դիտարկված են Էլեկտրաէներգիայի պահանջարկի կանխատեսումային ծավալներին համապատասխան Էներգահամակարգում ակնկալվող Էներգիայի պահանջարկի բավարարման հարցերը: Սակայն

անհրաժեշտություն է առաջանում կանխատեսել համակարգում հզորությունների պահանջարկը՝ դրա ծածկման համար անհրաժեշտ ռեսուրսների հնարավոր տարբերակների վերհանման և դրանց կառուցվածքի ընտրության տեսանկյունից: Դա պայմանավորված է ՀԷԿ-երում օգտագործվող ջրային պաշարների սեզոնային բնույթով, ԱԷԿ-ը պարբերաբար վերալիցքավորման և կանխարգելիչ պլանային վերանորոգման նպատակով պահուստ դուրս բերմամբ, Իրանի հետ ձեռք բերված համաձայնությունների կատարմամբ և այլ:

Խնդրի կարգավորման ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել կանխատեսման նպատակով օգտագործվող մոլտքային տվյալների, պահանջարկի կանխատեսման, կառուցվող նոր հզորությունների արժեքների և այլ անորոշությունների առկայությունը, որի նպատակով նպատակահարմար է հետազոտել ելքային տվյալների զգայունությունը նշանակալի գործոնների նկատմամբ:

1.4 Տարածաշրջանային համագործակցության ընդլայնման դերը

Էներգետիկայի բնագավառը զգալի ներդրում ունի երկրների միջև առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման գործում: Երկրների միջև Էներգետիկ ոլորտում փոխհարաբերությունները նպաստում են վերջինիս զարգացմանը, Էներգետիկ ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը և Էլեկտրաէներգիայի առևտրային հնարավորությունների ընդլայնմանը:

Է ն երգահամակարգերի գոլգահեռ աշխատանքը
երկրներին հնարավորություն կտա հաշվարկելու
արտադրող տեղակայանքների և ցանցային
ենթակառուցվածքների տեխնոլոգիական
ռեժիմները, բարձրացնելու մատակարարման
հուսալիությունը և անվտանգությունը: Որպես
առաջնահերթ կարգավորում պահանջող
խնդիրներն երկարող են քառանկյանները:


1. արտադրող կայանների վառելիքաէներգետիկ և
այլ շահագործման ծախսերի նվազեցումը,
2. բեռի գրաֆիկի հարթեցումը, որը բերում է
պիկային բեռնվածքի ժամանակ ներդրումների
նվազեցման,
3. ԷԷՅ-ի հուսալիության և կայունության
բարձրացումը:

Հարևան երկրների հետ ժամային գոտիների
տարբերությունը հնարավորություն է ստեղծում
Էլեկտրաէներգիայի տարանցումն իրականացնել
այնպես, որ Էլեկտրական բեռի պիկերը ծածկվեն
հարևան երկրների հզորությունների հաշվին:
Բացի այդ, մեծամասշտաբ նորոգումների
իրականացման ընթացքում անհրաժեշտ ծավալների
Էլեկտրաէներգիայի ներմուծման
հնարավորություն է ստեղծում:

Հաշվի առնելով երկրներում առկա էներգիայի
աղբյուրները, տարածաշրջանային
համագործակցությունը հնարավորություն կտա
հավասարակշռել Էներգիայի պահանջարկը տարեկան
բեռնվածքի ծածկման տեսանկյունից:

ԱՊՀ երկրների մեծ մասն իրականացնում է
Էլեկտրաէներգիայի միջսահմանային փոխհոսքերի
ինչպես երկրների էներգահամակարգերի միջև,
այնպես էլ երրորդ երկրներ [31]:
Էլեկտրաէներգիայի փոխհոսքերը ԱՊՀ երկրներում

2013 թվականի ընթացքում ներկայացված են նկար 1.7-ում:



Նկար 1.7 Է Լ Ե Կ տր ա Ե ն Ե ր գ ի ա յ ի փոխհոսքերը ԱՊՀ երկրներում

Երկրների Էնեբրգահամակարգերի աշխատանքի վրա մեծ ազդեցություն է ունենում հարևան երկրների հետ ինտեգրացիոն կապերի ընդլայնումը: Արդեն իսկ մշակված է ԱՊՀ երկրների և ԵՄ-ի Էնեբրգահամակարգերի սինքրոն աշխատանքի նախագիծը: Լատվիայի, Լիտվայի և Էստոնիա հանրապետություններն արդեն իսկ գոլգահեռ սինքրոն աշխատում են ՌԴ և Բելոռուսիա հանրապետության Էնեբրգահամակարգերի հետ:

Մասնավորապես, ԵԱՏՄ երկրների միացյալ Էնեբրգետիկ շուկայի ստեղծման ծրագիրը, որը նախատեսվում է ավարտին հասցնել 2019 թվականին: Մշակման փուլում է գտնվում ՀՀ Էնեբրգահամակարգի գոլգահեռ աշխատանքի վերականգնման ծրագիրը ԱՊՀ երկրների միացյալ Էնեբրգահամակարգի հետ [32]:

ՀՀ Էնեբրգահամակարգի կոմերցիոն գործունեությունը ընդհանուր առմամբ սահմանափակվում է Վրաստանի, Լեռնայի Ղարաբաղի և Իրանի Էնեբրգահամակարգերի հետ պայմանագրերով սահմանված գործառնությաներով [33]: Մասնավորապես

Իրանի հետ գործում է Էլեկտրաէներգիա-գազ փոխանակման ծրագիրը, համաձայն որի Իրանից առաքված յուրաքանչյուր 1 մ³ գազի դիմաց Իրան է առաքվում 3 կՎտժ Էլեկտրաէներգիա: Իրանի հետ գործում է նաև գազը Էլեկտրաէներգիայով փոխանակման պայմանագիր, որը Հայաստանին հնարավորություն տվեց գազամատակարարման նոր ուղի ունենալու, նվազեցնել գազի գնից կախվածությունը և եկամուտներ ստանալ բարձր արդյունավետությամբ ջերմային հզորությունների օգտագործմից: Իրանի Իսլամական Հանրապետության արտահանման զարգացման բանկի աջակցությամբ՝ 142.4 մլն ԱՄՆ դոլար գումարով, կառուցվում է Իրան-Հայաստան 400 կՎ լարման երկշղթա Էլեկտրահաղորդման օդային գիծը:

Վրաստանի հետ առկա է Հայաստանի և Վրաստանի ԷԷՀ-ների գույքահեն, ոչ սինքրոն աշխատանքի վերաբերյալ պայմանագիր, ինչպես նաև վթարային իրավիճակներում երկրների միջև Էլեկտրաէներգիայի մատակարարման պայմանագիր և այլ: Վրաստանի հետ ստեղծվում է կայուն առևտրի և փոխանակման համար պայմաններ ստեղծելու նորմատիվային բազա:

Ներկայումս Հայաստանը խոշոր ներդրումային ծրագրեր է իրականացնում տարածաշրջանային Էլեկտրաէներգետիկական համակարգի ինտեգրման ապահովման նպատակով, որն էր հուսալի ենթակառուցվածքներ է ստեղծում տարածաշրջանում Էլեկտրաէներգիայի առևտրվածառքի և տարանցման համար: Մասնավորապես Հայաստան-Վրաստան 400 կՎ լարման Էլեկտրահաղորդման գծի կառուցում, որի արդյունքում զգալիորեն կխթանվի Էներգետիկայի բնագավառում տարածաշրջանային փոխշահավետ

համագործակցության զարգացումը, ինչպես նաև կատեղծվի նախապայման՝ ԱՊՀ երկրների էլեկտրաէներգետիկական համակարգի հետ զուգահեռ ոչ սինքրոն աշխատանք կազմակերպելու համար:

Ընդհանուր ծրագիրը նախատեսված էր իրականացնել երեք փուլով:

1. նախատեսվում է բարձր լարման 350 ՄՎտ հզորությունամբ հաստատուն հոսանքի փոխակերպիչ ենթակայանի շինարարություն, ինչպես նաև նոր, 400 կՎ «Դմաշեն» ենթակայանի, 400 կՎ «Դմաշեն-Այրում» և 500 կՎ «Այրում-Վրաստանի սահման» էլեկտրահաղորդման գծերի կառուցման աշխատանքներ,
2. նախատեսվում է հաստատուն հոսանքի ներդիրի 350 ՄՎտ հզորությամբ երկրորդ մոդուլի կառուցում և միջհամակարգային հզորությունը կհասցվի 700 ՄՎտ-ի:
3. ներառում է՝ «Այրում» հաստատուն հոսանքի ներդիրի երրորդ մոդուլի կառուցում և միջհամակարգային հզորությունը կհասցվի 1050 ՄՎտ-ի, ինչպես նաև «Դմաշեն-Այրում» 400 կՎ լարման երկրորդ շղթայի կառուցում:

Հայաստան-Վրաստան և Իրան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծերի միացման նպատակով նախատեսվում է կառուցել նաև 400/220 կՎ լարման ենթակայան:

